



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ,
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՆՈՐԱԳՈՒՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ
2015-16 ուս. տարի

ԵՐԵՎԱՆ 2016

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

2015-16 ու. տարի

2015-16 ու. տարում ԿԲՌՊՆՏ Բաժնի աշխատանքները կազմակերպվել են ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակված աշխատանքային պլանին համապատասխան:

Բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Համալսարանի գործունեության վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում և մշակում,
- համալսարանի կայքի «Որակի ապահովում» էջի թարմացում տեղեկատվական նյութերով,
- Ուսումնամեթոդական կենտրոնի տեղեկատվական նյութերի պատրաստում,
- հարցումների կազմակերպում դիմորդների, ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շրջանում,
- հարցումների արդյունքների մուտքագրում, մշակում և վերլուծություն SPSS միջավայրում,
- Որակի կառավարման համակարգի ընթացիկ փաստաթղթային բազայի մշակում,
- ՄԿԾ-երի արտաքին աուդիտի կազմակերպման նպատակով ՈԱԱԿ առաջարկությունների ներկայացում,
- Արմենքա ծրագրի շրջանակներում ՀՀ ՈԱԾ-ին համապատասխան Գյուղատնտեսական ոլորտային շրջանակի մշակում, մասնակցություն աշխատաժողովներին,
- կառուցվածքային ստորաբաժանումներից համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքագրում և մշակում,
- Տեմպուս Մահաթմա ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված աշխատաժողովներին մասնակցություն, կրթության որակին և դասավանդման արդյունավետության վերաբերող հոդվածների ներկայացում,
- ՀՀ Բարձրագույն կրթության օրենքում փոփոխությունների առաջարկության ներկայացում:

Համալսարանի գործունեության վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում և մշակում

2015 թ.-ի նոյեմբեր ամսին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստացված գրությանը համապատասխան բաժնի կողմից իրականացվել է համալսարանի վարկանիշավորման ցուցանիշների հավաքագրում և համակարգում կառուցվածքային ստորաբաժանումներից:

Վարկանիշավորումը ներառում է համալսարանի գործունեության 117 ցուցանիշ, որոնք արտացոլում են համալսարանի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների գործունեությունը:



ARES-2015: Armenia

Academic Ranking of World Universities-European Standard ARES 2015

	Armenia	
--	----------------	--

UNIVERSITY	RATING
1) Yerevan State University	BBB+
2) National polytechnic University of Armenia	BBB
3) Yerevan State Medical University	BB+
4) Armenian National Agricultural University	BB+
5) American University of Armenia	BB+
6) Russian Armenian State University	BB+
7) Urartu University	BB+
8) Eurasia International University	BB+
9) Université Française en Arménie	BB
10) Armenian State University of Economics	B+
11) Mehrabyan Medical Institute	B
12) Yerevan State Linguistic University	B
13) Yerevan State Academy of Fine Arts	B


ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգի երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի ցանկում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2015 թվականին Երևանի պետական տնտեսագիտական և Վ. Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանների հետ՝ համապատասխանաբար 5.97, 5.93 և 5.92 միավորներով, կիսում է 2-րդ 3-րդ և 4-րդ տեղերը: Նույն անվանակարգում 2013 թվականին համալսարանը զբաղեցրել է 1-ին, իսկ 2014 թվականին 3-րդ հորիզոնականը:

2016 թ.-ի 19-20-ը ԿԲՌՊՆՏ բաժինը մասնակցություն է ունեցել Աղվերանում կազմակերպվող Բուհերի վարկանիշավորման ազգային համակարգի խնդիրների վերաբերյալ

աշխատածողովին, և տվել է շուրջ 35 առաջարկություն վարկանիշավորմանը ուղղված հարցազարերում փոփոխություններ կատարելու համար:

Համալսարանի կայքի «Որակի ապահովում» էջի թարմացում տեղեկատվական նյութերով 2015-16 ուս. տարում իրականացվել համալսարանի պաշտոնական կայքում ստեղծված «Որակի ապահովում» էջի ընթացիկ թարմացումներ, մասնավորապես՝

- «Համալսարանի շահակիցներ» և «Որակի ապահովման գործընթացներ» բաժինների ավելացում,
- նորմատիվային փաստաթղթային բազայի և այլ ենթաբաժինների ընթացիկ թարմացում:



2016 թ.-ին կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում տեղի ունեցող փոփոխություններին համապատասխան թարմացվել է Ուսումնամեթոդական կենտրոնի կայք էջը ըստ բոլոր ենթաբաժինների (<http://anau.am/hy/study-prosecc/learning-center>)

Տեղեկատվական նյութերի պատրաստում

2015-16 թթ. ուսումնական տարում բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել է հետևյալ տեղեկատվական նյութերի պատրաստում և հանձնում տպագրության՝

- Ուսումնամեթոդական կենտրոնի վերաբերյալ տեղեկատվական պաստառ, որում արտացոլված են ուսումնամեթոդական կենտրոնի բոլոր բաժինների խնդիրները և գործառույթները,
- Համալսարանի հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանում ընդունելության կազմակերպման համար տեղեկատվական բուկլետի պատրաստում, որում արտացոլված են ընդունելության պայմանները և այլ տեղեկատվություն:

Համալսարանի շահակիցների կարիքների ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում

2015-16 ուս. տարում 2016 թ.-ի մարտ-մայիս ամիսներին բաժնի կողմից իրականացվել է համալսարանի շահակիցների կարիքների գնահատման հարցում:

Հարցմանը մասնակցել են՝

- ՀՀ տարածաշրջանների տարբեր դպրոցների ավարտական դասարանների շուրջ 80 աշակերտներ,
- Համալսարանի 2-ից 4-րդ կուրսի շուրջ 810 ուսանողներ,
- 405 պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- շուրջ 71 շրջանավարտներ:

Հարցումները կազմակերպվել և իրականացվել են Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցների կողմից:

Հարցումների արդյունքները մուտքագրվել և մշակվել են SPSS սոցիոլոգիական վիճակագրական ծրագրի միջոցով:

Դիմորդների շրջանում հարցման նպատակն էր բացահայտել, գնահատել և վերլուծել ավարտական դասարանների աշակերտների (դիմորդների) կարիքները:

Տվյալ հարցման համար կազմված է եղել հարցաշար, որը ներառում է աշակերտների բուհական նախասիրությունների, բուհ դիմելու միտումների և տեղեկատվության հասանելիությանը վերաբերող շուրջ 14 հարց:

Դիմորդների շրջանում անցկացված հարցումների արդյունքները թույլ են տալիս հաստատել, որ համալսարանի կողմից տարվում են մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության ապահովման աշխատանքներ ՀՀ շրջանների դպրոցներում: Նկատելի դեր է խաղում համալսարանի կայք էջի հազեցվածությունը դիմորդին անհրաժեշտ տեղեկատվությամբ որպես տեղեկատվական աղբյուր:

- ❖ Դիմորդների մեծ մասը կարևորում է համալսարանում անհրաժեշտ մասնագիտությունների առկայությունը:
- ❖ Դիմորդների մեծ մասը լրացուցիչ պարապմունքների կարիք ունեն:
- ❖ Դիմորդների մեծ մասը ուսումը ավարտելուց հետո ակնկալում են ունենալ աշխատանք մասնագիտության գծով:
- ❖ Դիմորդները հիմնականում տեղեկատվություն ստանում են ծանոթների, համալսարանների ներկայացուցիչների և համալսարանների կայքերի միջոցով:
- ❖ Համալսարանը ընտրած 27 աշակերտները ցանկություն ունեն գյուղատնտեսական ոլորտի մասնագետ դառնալ և հստակ պատկերացնում են առկա մասնագիտությունների առանձնահատկությունները:
- ❖ Համալսարանը ընտրած աշակերտների մեծ մասը գտնում է, որ ընդունվելու և սովորելու վերաբերյալ ինֆորմացիան հասանելի է:
- ❖ 27 աշակերտներից 40.74%-ը կցանկանար սովորել տնտեսագիտական, 18.52%-ը՝ ագրոբիզնեսի և շուկայաբանության, 14.81%-ը՝ գյուղ. մեքենայացման ֆակուլտետում:

2016 թ.-ին ուսանողների շրջանում կազմակերպված կարիքների բացահայտման հարցմանը մասնակցել են 2-ից 4-րդ կուրսի շուրջ **810** ուսանողները: Հարցման **28** հարցաթերթ համարվել են անվավեր, **782**-ը՝ վավեր:

Հարցման մասնակցել են 405 արական սեռի և 377 իգական սեռի ներկայացուցիչներ:

Հարցման նպատակն է եղել գնահատել ուսանողների բավարարվածության մակարդակը համալսարանի՝

- ռեսուրսային բազայից,
- կրթական ծառայությունների որակից,
- վարչական կազմի աշխատանքից,
- հետազոտական գործունեության մեջ ներգրավումից:

Անցկացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ ՀԱԱՀ ուսանողների մեծ մասը բավարարված են կրթական գործընթացի կազմակերպման որակից:

Ուսանողները ավելի շուտ բավարարված չեն՝

- Լսարանային տեխնիկական ապահովումից և լաբորատոր պարապմունքների անցկացման համար նյութատեխնիկական հագեցվածությունից,
- Գնահատման համակարգից,
- Պրակտիկաների անցկացման պայմաններից,
- Ինտերնետից օգտվելու հնարավորություններից (դասին և դասից դուրս),
- Սանհանգույցների վիճակից,
- Մարզադահլիճների վիճակից և այլն:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անցկացված հարցմանը մասնակցել են 405 ներկայացուցիչներ, որից 175-ը՝ արական, իսկ 203-ը՝ իգական սեռի:

Հարցման նպատակն է եղել՝

1. գնահատել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքները,
2. չափել դասախոսի վերաբերմունքը համալսարանում կատարվող փոփոխությունների նկատմամբ,
3. բացահայտել այն գործոնները, որոնք կնպաստեն դասախոսներին ավելի արդյունավետ աշխատելուն:

Պրոֆեսորադասախոսական կազմի անկետավորման արդյունքում պարզվել է, որ ավելի շուտ բավարարված են աշխատանքային միջավայրից, տեղեկացվածության և խոսքի ազատության մակարդակից, կառավարումից (մեծ մասը գնահատել են «լավ»):

Սակայն ոչ դրական են գնահատել դասավանդման գործընթացում լսարանների ապահովվածությունը համակարգչային միջոցներով:

Հարցման բաց հարցերում դասախոսական կազմի կողմից կատարվել են հետևյալ հիմնական դատողություններ, մասնավորապես՝

- Բարձրացնել աշխատավարձերը,
- Թարմացնել լաբորատոր սարքավորումները և նյութատեխնիկական բազան,
- Թարմացնել լսարանային գույքը,
- Վերանայել և բարելավել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը,
- Բարելավել ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացման պայմանները,

- Կատարելագործել գործնական ուսուցումը,
- Վերանայել ուսանողների ընդունելության կարգը,
- Փոփոխել և թարմացնել առարկայական ծրագրերը,
- Ստեղծել պայմաններ ամբիոններում երիտասարդ կադրերով համալրելու համար,
- Կազմակերպել պարբերաբար բնույթ ունեցող վերապատրաստումներ հանրապետությունից դուրս,
- Ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները ժամանակակից պահանջներին համապատասխան,
- Ապահովել համակարգիչներով դասախոսների սենյակները,
- Ապահովել բժշկական ապահովագրություն,
- Բարձրացնել դասախոսի հեղինակությունը:

Շրջանավարտների շրջանում կազմակերպված հարցմանը մասնակցել է շուրջ 71 շրջանավարտ, որոնցից 7-ի պատասխանները համարվել է անվավեր:

Վավեր ճանաչված 64 հարցվածներից 51 արական սեռի ներկայացուցիչներ էին, 13-ը՝ իգական:

Հարցվածները 7 մասնագիտություններով ավարտած շրջանավարտներն էին՝

- Գյուղատնտեսական և պարենային արտադրանքի փաթեթավորման տեխնոլոգիա և դիզայն,
- Ագրոբիզնես և շուկայաբանություն,
- Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում,
- Ագրոէկոլոգիա,
- Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում,
- Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ,
- Անասնաբուժություն:

Շրջանավարտների անկետավորման արդյունքում պարզվել է, որ նրանք հիմնականում բավարարված են՝

- ստացված կրթությունից,
- կրթական ծրագրերի իրականացումից,
- ստացված տեսական գիտելիքների արդիականության մակարդակից,
- ստացված ինքնակազմակերպման հմտություններից և այլն:

Շրջանավարտներին կողմից կատարվել են հետևյալ դատողությունները՝

- ժամանակակից տեխնոլոգիաների և լաբորատոր սարքավորումների սակավ լինելը կամ բացահայտությունը,
- համակարգչային լսարանների քիչ լինելը,
- մասնագիտական պրակտիկայի անցկացման որակը,
- քիմիական լաբորատոր նյութերի բացահայտությունը,
- մասնագիտական լաբորատորիաների անհասանելիությունը և այլն:

Վերը նշված բոլոր շահակիցների շրջանում կատարված հարցման արդյունքները ամբողջությամբ նեկայացված են հաշվետվության տեսքով «ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվության» մեջ:

Շահակիցների անկետավորման բաց հարցերի արդյունքների համադրման վրա կատարվել է եզրակացություն՝

- համակարգչային լսարանները քիչ են կամ հանգեցված չեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,
- ուսանողների գնահատման համակարգը անհրաժեշտ է վերանայել և վերափոխել,
- դասախոսական կազմին անհրաժեշտ է պարբերաբար ուղարկել վերապատրաստումների,
- պրակտիկաները անհրաժեշտ է կազմակերպել ավելի արդյունավետ,
- անհրաժեշտ է ուշադրություն դարձնել լսարանային գույքին և լաբորատոր լսարանների նյութատեխնիկական հագեցվածությանը,
- բարելավել ուսանողներին և այլ շահակից կողմերին տեղեկատվության ապահովման գործընթացը:

Հարցումներ ՀԱԱՀ հենակետային վարժարանում

2016 թ.-ին ԿԲՌՊՆՏ բաժնի կողմից իրականացվել է հարցում ՀԱԱՀ հենակետային վարժարանի 12-րդ դասարանի շուրջ 90 աշակերտների շրջանում կրթական միջավայրի արդյունավետությունը գնահատելու համար: Ստացված արդյունքների հիման վրա կազմվել է ամփոփ հաշվետվություն և ներկայացվել քննարկման:

Ամբիոններում լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների իրականացման

գործընթացը գնահատելու հարցումներ

Համալսարանի ամբիոններում լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների իրականացման գործընթացը գնահատելու նպատակով ԿԲՌՊՆՏ բաժինը իրականացրել է հարցում ամբիոններում:

Կազմվել է հարցման թերթիկ և տրամադրվել համալսարանի բոլոր ամբիոններին:

Արդյունքները ամփոփվել են և ներկայացվել Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորին:

Որակի կառավարման համակարգի ընթացիկ փաստաթղթային բազայի մշակում

2015-16 ուս. տարում բաժնի կողմից իրականացվել է որակի ապահովման և կառավարման գործընթացներին առնչվող ընթացիկ փաստաթղթային հենքի մշակում:

Փաստաթղթերի մշակումը իրականացվել է «Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական բարելավման պլան-ժամանակացույցին» համապատասխան:

2015-16 ուս. տարում մշակվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և ընթացակարգ:
- Համալսարանի ակադեմիական աշխատակազմի ներգրավման և կայունության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ:
- ՀԱԱՀ շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում (ինքնավերլուծություն):
- Ուսանողների ուսումնառության գնահատման ռուբրիկների մշակման կարգ:
- Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեթոդներ և գործիքներ: (Ուղեցույց)
- ՀԱԱՀ կրթական գործունեության գնահատման կարգ:
- Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականություն և ընթացակարգ:
- ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման և վերանայման քաղաքականություն:
- ՀԱԱՀ կադրային քաղաքականություն:
- Համալսարանի ներքին և արտաքին տեղեկատվության ապահովման ընթացակարգ:

- «Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկում, չափումներ և գնահատում» ընթացակարգ:
- ՀԱԱՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ:
- Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ (ՀԱԱՀ):

Փաստաթղթերը ներկայացվել են ՀԱԱՀ գիտական խորհրդի քննարկմանը և հաստատվել:

Փաստաթղթերի մշակմանը զուգահեռ իրականացվել է «Որակի ներքին ապահովման համակարգ»-ի ինքնավերլուծություն Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափին համապատասխան: Ինքնավերլուծության արդյունքում կազմվել է հաշվետվություն և ներկայացվել Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորին քննարկման:

Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքագրում և վերլուծություն

2015-16 ուս. տարում բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել է Համալսարանի կողմից սահմանված գործունեության առանցքային ցուցանիշների հավաքագրում ըստ համալսարանի գործունեության յոթ ուղղությունների՝

- Ընդունելություն և ուսանողական համակազմ,
- Ուսումնական գործընթաց,
- Ռեսուրսներ և կառավարում,
- Ենթակառուցվածք,
- Գիտություն և ինովացիա,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Տվյալների հավաքագրումը իրականացվում է հաշվի առնելով տվյալների աղբյուրը և պատասխանատուն:

ԳԱՑ-երի հավաքագրումը և վերլուծությունը հիմք է հանդիսանում համալսարանի գործունեության քանակական վերլուծության համար:

Գործունեության առանցքային ցուցանիշները կարիք ունեն հրապարակման համալսարանի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման համար:

Համագործակցություն ՀՀ ՈԱԱԿ-ի հետ

Ֆորում Տեմպուս Մահաթմա ծրագրի շրջանակներում

2016 թ.-ի հունվարի 21-22 համալսարանը մասնակցել է Տեմպուս Մահաթմա ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Մասնագիտական կրթության որակի ապահովում, որքանով է ուսուցումն արդյունավետ» Որակի ապահովման երրորդ ֆորումին:

Ֆորումին համալսարանի կողմից ներկայացվել են հետևյալ հոդվածները՝

- «Բարձրագույն կրթության որակի կառավարման տարրերը. Հայաստանի ազգային ազդարային համալսարանի փորձը», Մուրեն Կոսեմյան,
- «Մասնագիտական կրթության որակի ապահովումը տարբեր շահառուների տեսանկյունից», Հարություն Հարությունյան,
- «Հայաստանի ապագա գինեգործների անհրաժեշտ հմտությունները, որակները և փորձառությունը» Վարդան Ուռուտյան, Զարուհի Մուրադյան:

Հոդվածների անոտացիաները ներկայացված են <http://forum.anqa.am/hy/#speakers> կայքէջում:

ՈԱԱԿ-ի կողմից հետազոտության իրականացում

2016 թ.-ին փետրվար ամսին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել է «Հայաստանի մասնագիտական կրթական համակարգի որակի ապահովման գործընթացների 2-րդ համակողմանի հետազոտություն» ՀՀ բուհերի շրջանում:

ՈԱԱԿ-ից ստացված գրությանը համապատասխան ԿԲՌՊՆՏ բաժնի կողմից ՌԻ-սումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի ղեկավարությամբ սահմանված ժամկետներում քննարկվել և լրացվել է կցված հարցաշարը և ուղարկվել է հարցետախիբոջը (ՈԱԱԿ):

Հանդիպումներ ՈԱԱԿ-ում ծրագրային հավատարմանգրման և արտաքին աուդիտի կազմակերպման հարցերի շուրջ

2016 թ.-ին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ բուհերի շրջանակներում, քննարկվել են հարցեր, ուղղված համալսարաններում ծրագրային հավատարմագրման և ծրագրային արտաքին աուդիտների կազմակերպմանը: Համալսարանը այդ ուղղությամբ գրավոր մի շարք առաջարկություններ է ներկայացրել ՈԱԱԿ:

ՀՀ Բարձրագույն կրթության օրենքում փոփոխությունների կատարման առաջարկությունների ներկայացում ՀՀ ԿԳՆ

ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից ստացված «ՀՀ Բարձրագույն կրթության օրենքում փոփոխությունների կատարման» գրությանը համապատասխան Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից տրվել են գրավոր առաջակություններ և ուղարկվել ՀՀ ԿԳՆ նախարարություն: